ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 148-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 131-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Չեղյալ համարել Վայք համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 25-ի « Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերերի նպատակային նշանակության 0,010 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության բնակելի տունը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 131-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 149-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵԽԱԿ ԴԱՎԻԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5.1, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետերի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ և 17-րդ կետերով և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,010 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-022-0032-0004 կադաստրային ծածկագրով բնակելի տունը հասցեավորել՝ Վայք համայնք, գյուղ Զառիթափ, 2-րդ փ. 3/1 բնակելի տուն:
2. Վայք համայնքի Զառիթափ գյուղի 2-րդ փ. թիվ 3/1 հասցեում գտնվող քաղ. Մեխակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող իր սեփականություն հանդիսացող հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 68.3 քմ մակերեսով բնակելի տունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,010 հա, համարել օրինական:
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեիին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5. Սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված 68.3 քմ մակերեսով կառույցը ճանաչել օրինական, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Մեխակ Դավիթի Խաչատրյանին շինության համար վճարել 43 100/ 68.3 x 631/ ՀՀ դրամ, ՀՀ դրամ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 150-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 08.08.2001 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 1.0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Նոր Ազնաբերդի գյուղապետարանի և Արայիկ Արամայիսի Հարությունյանի միջև 2001 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ գույքի վարձակալության N 246 պայմանագրի , հաշվի առնելով վարձակալ Ա.Հարությունյանի դիմումը (մտից N Հ-48, 11.08.2023 թ.).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի օգոստոսի 11-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Նոր Ազնաբերդի գյուղապետարանի և քաղաքացի՝ Արայիկ Արամայիսի Հարությունյանի միջև 2001թ. օգոստոսի 08-ին կնքված հողամասի վարձակալության N 246 պայմանագիրը 1.0 հա հողամասի մասով /վկայական՝ N 0024758/
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 151-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00236 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00236 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0010-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է ինքնակամ կառուցված 20.3 քմ մակերեսով տարածք, ճանաչել որպես առանձին միավոր, օրինական, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ. 15/8 տարածք:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 152-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ԴԱՎԻԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչ Մեխակ Դավիթի Խաչատրյանի /ծնվ. 25.02.1972թ/ սեփականություն համարվող Վայք համայնք գյուղ Զառիթափ, 2-րդ փ. 3/1 հասցեում գտնվող 0.010 հա մակերեսով հողամասի հողհատկացման իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 153-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.08.2023Թ-Ի ԹԻՎ 149-Ա «ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵԽԱԿ ԴԱՎԻԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 10.08.2023 թվականի թիվ 149-Ա որոշման բովանդակության 5-րդ կետում նշված «ճանաչել օրինական» բառերից հետո ավելացնել «մուտքագրման ծածկագիր՝ 2023C6XUFJ» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:
2.Ֆինանսական բաժնին՝ ղեկավարվել օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ